ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/15

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.06.2017թ. թիվ 03/27-1/10931-17 գրությամբ «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հրազդանի քաղաքապետարանի 22.05.2017թ. թիվ 488 գրության հիման վրա, 16.06.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Հրազդանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.05.2017թ. թիվ 488 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հարզդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերք ձեռքբերելու նպատակով կազմակերպվել է «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Մի շարք չափաբաժիններով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր: Հրազդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի կողմից պարբերաբար բողոք է ստացվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվող սննդամթերքների մատակարարման ժամկետների և թերի մատակարարման վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագրի հիման վրա Հրազդանի համայնքապետարանի կողմից N 1, 7, 23, 30, 38 չափաբաժինների մասով կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին, սակայն ոչ մի գործողություն չի ձեռնարկվել նրա կողմից:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիշյալ մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով խնդրում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Քրիստինե Բաղդասարյանը և Հարզդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի տնօրեն Արփիկ Գրիգորյանը:

3. **«ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Խորհուրդը դիմել է «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2017թ. թիվ 03/27-1/10931-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայանալիք նիստի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԷՍ-2017/15 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2017թ. թիվ 03/27-1/10931-17 գրությունը, Հրազդանի համայնքապետարանի 22.05.2017թ. թիվ 488 գրությունը, Հարզդան համայնքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ի 31.03.2017թ. Հրազդանի համայնքապետին ուղղված զեկուցագիրը, «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 14.02.2017թ. նիստի N 03 արձանագրությունը, Հրազդանի համայնքապետարանի և «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի միջև 27.02.2017թ. կնքված N ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

Հրազդանի համայնքապետարանը «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունը 1, 7, 23, 30, 38 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Հրազդանի համայնքապետարանի և «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի միջև 27.02.2017թ. կնքվել է N ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

«Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը 31.03.2017թ. թիվ Զ-15 զեկուցագրիր է ներկայացրել Հրազդանի համայնքապետարան և հայտնել, որ «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում սննդամթերք չի մատակարարվել, և համապատասխան փաստաթուղթ չի ներկայացվել:

Պատվիրատուն 06.04.2017թ. թիվ 336 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտնելով, որ Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով սննդամթերք ձեռք բերելու նպատակով պայմանագիր է կնքվել «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ի հետ, սակայն վերջինս սննդամթերք չի մատակարարում:

Պատվիրատուն 09.08.2017թ. թիվ 787 գրությամբ դիմել է «ՌԵԴ ՖՕՕԴ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Գևորգյանին՝ հայտնելով հետևյալը.

«Հրազդանի համայնքապետարանի և «ՌԵԴ ՖՕՕԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ _Մատակարար) միջև 27.02.2017թ. կնքված «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17» ծածկագրով սննդամթերքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Մատակարարը պարտավորվում է սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված Սննդամթերք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնուրդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված 3):

Համաձայն Պայմանագրի 2.1 կետի Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

Համաձայն Պայմանագրի 2.2 կետի Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին (Ստացողին) նրա կողմից նշված հասցեով, պայմանով, որ յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 8:30-9:00-ն «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում մատակարարված լինի ապրանքը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրի վերոնշյալ կետերը, ուստի Պատվիրատուն՝ Հրազդանի համայնքապետարանը, միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 01.04.2017 թվականից:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված «Սննդամթերք» (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):

• 2.2 կետի համաձայն՝ Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին (Ստացողին) նրա կողմից նշված հասցեով, պայմանով, որ յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 8:30-9:00-ն «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում մատակարարված լինի ապրանքը:

• 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

• 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են մեկ օրից ավելի:

• 2-րդ հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 1-ից 4-րդ եռամսյակներում մատակարարել թվով 5 անվանում ապրանք:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ն խախտել է Ընկերության և Հրազդանի համայնքապետարանի միջև 27.02.2017թ. կնքված N ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-15/2-06/17 ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորություններն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2017թ. «ՌԵԴՖՕՕԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ